Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով բենզինի (ռեգուլյար) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31 հուլիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Տ. Ղուկասյան /գնահատող/
	Ս. Զաքոյան /բացող/
	Գ. Խաչատրյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

հանձնաժողովի անդամ	Շ. Իսախանյան /գնահատող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

- ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան